Համայնքային ծառայությունը հանրային ծառայության ինքնուրույն տեսակ է, որն իրականացվում է ՀՀ քաղաքապետարանների (գյուղապետարանների) աշխատակազմերում: Համայնքային ծառայությունը մասնագիտական գործունեություն է և ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանը:

Համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն 18 տարին լրացած, հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցողները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, եթե նրանք, իհարկե, բավարարում են համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները "Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված, "Համայնքային ծառայության մասին" ՀՀ օրենքի 11-րդ հոդված):